# << ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, 1512, գ. Ծովագյուղ 14 փողոց, 10 շենք
<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ,
էլ. փոստ՝ cmankapartez@mail.ru, 094 11 44 66

N 04

<<18>> մարտի 2025թ.

ՀՀ ֆինանսների նախարարություն
ՀՀ ֆինանսների նախարար
Վահե Հովհաննիսյանին

Հարգելի պարոն Հովհաննիսյան

Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ <<Ծովագյուղ բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի կարիքների համար 11.02.2025թ-ին հրապարակվել է <<ՀՀ ԳՄԾԲՄ-ԳՀԱՊՁԲ-25/01>> ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման հայտարարություն, որին հայտ է ներկայացրել նաև <<ԱՐՏԱԿՇԻՆ>>ՍՊԸ-ն և ընտրված մասնակից է ճանաչվել 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 22-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 28-րդ, 30-րդ և 31-րդ չափաբաժինների մասով: Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում <<ԱՐՏԱԿՇԻՆ>>ՍՊԸ-ի կողմից Հավելված N 1 Դիմում հայտարարության մեջ նշված artakshin8181@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին 04.03.2025թ-ին և 10.03.2025թ-ին ուղարկվել է գրությունը՝ պայմանագրի կնքման առաջարկի վերաբերյալ, պայմանագրի նախագծի հետ միասին: Ինչպես նաև 14.03.2025թ-ին կրկին անգամ ծանուցվել է պայմանագիրը կնքելու առաջարկի վերաբերյալ, իսկ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում զրկվելու է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Կից՝ էլեկտրոնային փոստին ուղարկված հաղորդագրությունների պատճենները:

Սակայն օրենքով սահմանված ժամկետում <<ԱՐՏԱԿՇԻՆ>>ՍՊԸ-ն չի ներկայացրել իրավերի պահանջներին համապատասխան որակավորման և պայմանագրի ապահովումները և չի ստորագրել պայմանագիրը:

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետի պահանջներով՝ խնդրում եմ Ձեզ <<ԱՐՏԱԿՇԻՆ>>ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

Ստորև ներկայացնում եմ անհրաժեշտ տեղեկատվությունները՝ համաձայն ձևաչափի

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Անվանումը | ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | Գործունեության հասցեն | Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | Որպես ընտրված մասնակցից հրաժարվել կամ զրկվել է պայմանագրի կնքելու իրավունքից | |
| <<ԱՐՏԱԿՇԻՆ>> ՍՊԸ | 01007798 | Միքայել Չալախյան 25/1 | | | V | 18.03.2025 թ. ՀՀ ԳՄԾԲՄ-ԳՀԱՊՁԲ-25/01 |

Տնօրեն՝ Զ. Սարգսյան